

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է Արարատյան թեմի քահանաների վերապատրաստման դասընթացներ, որի ընթացքում քահանա հայրերը պետք է լսեն բազմաթիվ դասախոսություններ՝ Հայ Եկեղեցու պատմության, մատենագիտության, հայ ժողովրդի պատմության, Հին և Նոր Կտակարանների պատմության. և հատկապես քարոզխոսության վերաբերյալ:

Այդ դասախոսությունները պետք է կատարվեն կանոնավոր կերպով, ամեն երկուշաբթի, Երևանի Ս. Սարգիս եկեղեցուն կից առաջնորդարանի սրահում:

Ս/թ. մայիսի 26-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում առաջին հանդիպումը: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի և Արարատյան թեմի շուրջ քառասուն քահանա հայրեր:

Հանդիպմանը ներկա էին նաև Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը և փոխանորդի օգնական Տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը, Երևանի Ս. Սարգիս եկեղեցու եկեղեցական վարչության նախագահ Վալտեր Արամյանը:

Հանդիպման երեկոն սկսվում է Վեհափառ Հայրապետի «Հայր մեր»-ով:

Այնուհետև բացման խոսքով հանդես է գալիս Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, որը, ներկայացնելով քահանա հայրերին, հայտնում է բոլորի որդիական հարգանքը դեպի իրենց հոգևոր Պետին:

Սրբազանն իր խոսքն ավարտում է՝ ասելով. «Մեր նպատակն է աշխատել, որ մեր խոսքը հասնի հավատացյալ ժողովրդին, որովհետև մեր ժողովուրդը կարոտ է Ավետարանի պատգամներին»:

Տ. Կոմիտաս սրբազանը հրավիրում է Հայոց Հայրապետին՝ Իր խոսքը և օրհնությունը տալու սույն նախաձեռնությանը:

Խոսք առնելով Նորին Սրբությունը նախ ողջունում է Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի այս նախաձեռնությունը՝ նշելով հոգևորականի պարտականությունների շրջանակները, և կատարում է այն հաստատումը, որ քահանան այն անձն է, որին հանձնված է հավատացյալի ավետարանական, կրոնաբարոյական, հայրենասիրական դաստիարակության գործը: Եվ այդ գործի համար անհրաժեշտ է բարեխիղճ պատրաստություն:

Նորին Սրբությունն Իր խոսքն ավարտում է ընդհանուր Եկեղեցվո մեծ քարոզիչ սուրբ Հովհան Ոսկեբերանի հետևյալ խոսքերով. «Բոլոր իր դժվարությունների մեջ քահանան մեկ օգնական ունի՝ խոսքի ուժը: Եթե նրան պակասում է այդ ուժը, իրեն հանձնված հոգիները կլինեն նման այն նավերին, որոնք մշտապես փոթորիկի են բռնված: Դրա համար քահանան ամեն ինչ պետք է անի, որպեսզի ձեռք բերի այդ ուժը»:

Հանդիպումն ավարտվում է Տ. Կոմիտաս սրբազանի շնորհակալական խոսքով:

Փոքր ընդմիջումից հետո քահանա հայրերը Վեհարանի հանդիսությունների դահլիճում դիտում են երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ և Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսների հայրապետական ընտրության և գահակալության հանդիսություններին նվիրված կինոժապավենները: